# Ա Ր Ձ Ա Ն Ա Գ Ր Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն N 2

## N ՁՀՏ-ԳՀԱՊՁԲ-17/1 ծածկագրով գնանշման հարցումով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի նիստի

գ.Ջրվեժ — «20» սեպտեմբերի 2017թ.
ժամը 10:00

Մասնակցում էին՝
Հանձնաժողովի նախագահ՝ Է.Խոցանյան,
Հանձնաժողովի անդամներ՝ Լ.Պապոյան, Ա.Մարգարյան,
Հանձնաժողովի քարտուղար՝ Տ.Իսոյան

Պատվիրատուն՝ «Ջրվեժի համայնքային տնտեսություն» ՀՈԱԿ-ը, որը գտնվում է ՀՀ Կոտայքի մարզ, գ.Ջրվեժ Մելքոնյան 76 հասցեում, ստորև ներկայացնում է «ՁՀՏ-ԳՀԱՊՁԲ-17/1» ծածկագրով լուսադիոդային լուսատուների ձեռքբերման նպատակով հայտարարված գնանշման հարցումով ընթացակարգի բացման նիստի մասին համառոտ տեղեկատվություն:

N ՁՀՏ-ԳՀԱՊՁԲ-17/1 ծածկագրով գնանշման հարցման հայտերի բացման մասին

1. Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի «Գնումների գործընթացի կազմակերպման մասին» թիվ 526-Ն որոշման 40-րդ կետի 1-ին ենթակետի դրույթներով՝ հանձնաժողովի նախագահը հրապարակեց գնման հայտով սահմանված՝ տվյալ ընթացակարգի շրջանակում գնվելիք ապրանքի ընդհանուր գինը՝ մեկ թվով արտահայտված՝ 2 100 000 (երկու միլիոն հարյուր հազար) ՀՀ դրամ:

Ընդունվել է որոշում՝ կողմ 3, դեմ 0:

2. Ընդունել ի գիտություն, որ գնանշման հարցմանը հայտ է ներկայացրել հետևյալ կազմակերպությունը.

| Հ/Հ | Մասնակցի անվանումը | Գտնվելու վայրը, հեռախոսահամարը |
|---|---|---|
| 1 | «Սեդա Իվանյան Թևադրոսի» Ա/Ձ | Գեղարքունիքի մարզ, ք.Սևան, Սայաթ-Նովայի փ., տ. 3/1<br>հեռ.043 44 71 07 |

Ընդունվել է որոշում՝ կողմ 3, դեմ 0:

3. Ծրարի կազմման և ներկայացման համապատասխանությունը.
Համապատասխանում է՝ «Սեդա Իվանյան Թևադրոսի» Ա/Ձ -ի կողմից ներկայացված ծրարները:

Ընդունվել է որոշում՝ կողմ 3, դեմ 0:

4. Մասնակցի կողմից առաջարկված գինը հետևյալն է .

| Հ/Հ | Մասնակցի անվանումը | Առաջարկված գինը (ՀՀ դրամով) | | |
|---|---|---|---|---|
| | | Արժեք (ինքնարժեքի և կանխատեսվող շահույթի հանրագումարը) | ԱԱՀ-ն | Առաջարկված ընդհանուր գինը |
| 1 | «Սեդա Իվանյան Թևադրոսի» Ա/Ձ | 2 100 000 (երկու միլիոն հարյուր հազար) | - | 2 100 000 (երկու միլիոն հարյուր հազար) |

Ընդունվել է որոշում՝ կողմ 3, դեմ 0:

5. Բացված ծրարում հրավերով նախատեսված փաստաթղթերի առկայությունը և դրանց կազմման համապատասխանությունը գնանշման հարցման հրավերով սահմանված վավերապայմանների.

Համապատասխանում է՝ «Սեդա Իվանյան Թեադրոսի» Ա/Ձ-ի կողմից ներկայացված հայտը:

Ընդունվել է որոշում՝ կողմ 3, դեմ 0:

6.Գնանշման հարցման առաջին տեղ զբաղեցրած մասնակից հայտարարվեց.

| Հ/Հ | Մասնակցի անվանումը |
|---|---|
| 1 | «Սեդա Իվանյան Թեադրոսի» Ա/Ձ |

Ընդունվել է որոշում՝ կողմ 3, դեմ 0:

7. Գնահատող հանձնաժողովը՝ ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի «Գնումների գործընթացի կազմակերպման մասին» թիվ 526-Ն կարգի 43-րդ կետի 3-րդ ենթակետի համաձայն ՀՀ կառավարության առընթեր պետական եկամուտների կոմիտե ներկայացնել՝ «Սեդա Իվանյան Թեադրոսի» Ա/Ձ-ի՝ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ժամկետանց պարտավորությունների, ինչպես նաև հրավերով «ֆինանսական միջոցների» որակավորման չափանիշի գնահատման համար սահմանված պայմանների առկայության վերաբերյալ հարցում:

ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի «Գնումների գործընթացի կազմակերպման մասին» թիվ 526-Ն կարգի 43-րդ կետի 4-րդ ենթակետի համաձայն առաջին տեղ զբաղեցրած մասնակից՝ «Սեդա Իվանյան Թեադրոսի» Ա/Ձ-ին էլեկտրոնային փոստի միջոցով ծանուցել՝ առաջարկելով ծանուցումն ուղարկելու օրվանից երեք աշխատանքային օրվա ընթացքում հրավերով սահմանված կարգով ներկայացնել առաջարկվող ապրանքի անվանումը՝ ապրանքային նշանը, արտադրողի անվանումը, ծագման երկիրը, ապրանքի տեխնիկական բնութագրերը:

Ընդունվել է որոշում՝ կողմ 3, դեմ 0:

8. Հայտերի գնահատման արդյունքների հաստատման նիստ հրավիրել 2017 թվականի սեպտեմբերի 27-ի ժամը 10:00-ին, հասցեն՝ Ջրվեժի համայնքապետարան՝ գ. Ջրվեժ, Մելքոնյան 76:

Ընդունվել է որոշում՝ կողմ 3, դեմ 0:

Հանձնաժողովի նախագահ՝ Է.Խոցանյան

Անդամներ՝ Լ.Պապոյան

Ա.Մարգարյան

Քարտուղար՝ Տ.Իսոյան